#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 1, ՄԱՐՏ 2021

3 ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԵՒ 2 ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՄԻԱՑԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԻՆ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

Փաստերի ստուգման 5 լաբորատորիա

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Հուշագիր է կնքել 5 կրթական հաստատության հետ, որտեղ 2020 թվականի սեպտեմբերից հիմնվել են և սկսել են աշխատանքները փաստերի ստուգման լաբորատորիաները:

- Երևանի Պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետ
- Բրյուսովի անվան Լեզվագիտական համալսարանի Լրագրության բաժին
- Գավառի պետական համալսարան
- Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
- Արեգնազան կրթահամալիր:

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵՑԻՆ

2020 թվականի հուլիսից Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ի հետ իրականացնում է՝ Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ ծրագիրը՝ նպատակ ունենալով զարգացնել երիտասարդների և ապագա լրագրողների մեդիա գրագիտությունը և փաստերի ստուգման հմտությունները Հայաստանի 5 կրթական հաստատություններում ստեղծելով փաստերի ստուգման լաբորատորիաներ: Ծրագրի մեկնարկին կրթական հաստատությունների մասնագետ-դասընթացավարները մեր փորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի օգնությամբ անցան Թաստերի սուտգման Վերապատրաստման 5-օրյա դասընթացը: Դասընթացին ներկայացվեց ծրագրի շրջանակում պատրաստված Փաստերի ստուգման ձեռնարկը:

«Փաստերի ստուգում» դասընթացի նպատակն է աջակցել կրթական հաստատություններին ուսուցանել ապատեղեկատվության դեմ պայքարի առկա գործիքներն ու մեխանիզմները, աշակերտներին և ուսանողներին փոխանցել տեղեկությունների ստուգման գործնական գիտելիք և հմտություններ: Ստացած գիտելիքը աշակերտներն ու ուսանողները կկիրառեն ուսումնական հաստատություններում ստեղծվող «Փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներում»:

«Փաստերի ստուգում» դասընթացի ծրագիր >>>

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

- Մեդիագրագիտություն՝ ձեռնարկ - https://media.am/hy/lab/2020/04/16/17917/
- Փաստերի ստուգումը և լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը ՁԵՌՆԱՐԿ - http://factradar.tilda.ws/
- Տեղեկությունների ստուգում. բուհական դասընթացի մեթոդական ուղեցույց - https://media.am/hy/lab/2019/02/09/11015/
- «Լրագրության հինգ կարևոր հարցերը», հանրային լրագրության ակումբ - http://media.am/pjc-5-W
- Անվճար նյութեր ուսուցիչների համար - http://www.medialiteracy.com/freestuff.htm
- Media and information literacy curriculum for teachers https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000192971

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր-ում ձևավորված փաստերի ստուգման լոբորատորիայի տասներորդցի աշակերտներն են: Նրանք փնտրում են ապատեղեկատվություն, բացահայտում և դրանց փոխարեն իրենց ընկերների համար հրապարակում ճշտված տեղեկություններ: «Ապատեղեկատվության վիրուսի դեմ պայքար» ծրագրի շրջանակում Հայաստանում ԱՄՆ դեսպանության աջակցությամբ հայաստանյան 5 կրթական հաստատություններում ստեղծվել են փաստերի ստուգման լոբորատորիաներ:



ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ՝

Անի Արղության, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, *10-1* դասարան

Դե ինչ, մենք շարունակում ենք ստուգել նորությունները, հասկանալ, թե որ կայքերն են մեզ մատուցում ապատեղեկատվություն:
ArmDay.am կայքում ապրիլի 12-ին, ժամը՝ 19:42, հրապարակվել է մի նյութ, որտեղ նշվում է, որ Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը տեսակոնֆերանս է ունեցել իր ադրբեջանցի գործընկեր Զաքիր Հասանովի հետ, որի ընթացքում քննարկել են թուրք-ադրբեջանական զորավարժությունները:

Նախ՝ սկսենք նրանից, որ կայքում նշված չէ ոչ մի տեսակի աղբյուր, նշված չէ, թե տվյալ տեղեկությունը որտեղից է վերցրել: Նշված չէ նաև, թե որ ամսաթվին է այս ամենը կատարվել, այսինքն՝ երբ է տեղի ունեցել կոնֆերանսը: >>>

Դասավանդող՝
Հասմիկ Թոփչյան

Աշխատող խումբ.

1. Ստելլա Սարգսյան
2. Կարոլինա Գրիգորյան
3. Ալլա Թադևոսյան
4. Անահիտ Ասատրյան
5. Անի Արղության
6. Յանա Նահապետյան

Երկար ուսումնասիրություններից հետո, ռուսական, ադրբեջանական և թուրքական կայքերը հետազոտելուց հետո, հասկացա, որ կոնֆերանսը իրականում տեղի ունեցել է ապրիլի 7-ին, սակայն տվյալ կոնֆերանսի ժամանակ չի նշվել այն ամենն, ինչը նշված է կայքում: Ընդամենը քննարկվել է տվյալ իրավիճակը և ներկայացվել են փաստեր: Այդքանը...



Լուսինե Հակոբյան, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, 10-1 դասարան

Ստուգման նյութ՝ Թուրքիայի օդուժը ավիահարվածներ է հասցրել Իրանի սահմանին

Փետրվարի 2,2021 թվի new blog մամուլում նյութ է հրապարակվել, որտեղ ասվում է, որ Թուրքիան ավիահարվածներ է հասցրել Իրանի սահմանին: Մենք որոշեցինք այս նյութը ստուգել: Նշեմ, որ նյութում չկար որևէ նկարագրություն, միայն վերնագիրն էր: Կար միայն նկար և վիդիո: Ռուսական մամուլից հայտնի դարձավ, որ հարվածները կատարվել են Իրաքի Սուլեյմանի նահանգի Պիշդար շրջանի Շենե գյուղին, որը գտնվում է Պարսկաստանի սահմանին մոտ:

Արդյունքում պարզեցինք, որ միայն վերնագրով ու առանց մեկնաբանության տպավորություն է ստեղծվում, որ Պարսկաստանը պատերազմ է սկսում Իրանի հետ, որը չի համապատասխանում իրականությանը:

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 1

Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

«Ֆեյքաքաղ. կեղծ տեղեկատվության հիմնական աղբյուրները»

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ, 27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am